ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 29

ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Մրգավան համայնքի նորընտիր ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 09-ի առաջին նիստի հետևյալ օրակարգը.

1. Համայնքի ավագանու կանոնակարգի ընդունման մասին:

2. Հողամասը և հողամասում առկա շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և գործառնական նշանակությունը փոխելու մասին:

3.Մրգավան համայնքի 2016թվականի վարչական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

4.Մրգավան համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

5.Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի որոշման, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների,<<Մրգավանի մանկապարտեզ>>ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը,պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

5. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

7. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 30-Ն

ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է՝

1.Ընդունել Մրգավան համայնքի ավագանու կանոնակարգը համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Մրգավան համայնքի ավագանու 2012թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1 որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 31-Ն

ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախկին քարտեզագրման ժամանակ տեղի ունեցած սխալի արդյունքում կադաստրային 0044-0028 ծածկագրին հարակից հողամասը և հողամասում առկա շինությունը համարվել են քաղաքացու սեփականություն, ուստի ելնելով քարտեզագրման սխալը վերացնելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010թ. հունիսի 1-ի N186-Ն հրամանի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի փետրվարի 2-ի N88 որոշմամբ և համայնքի գլխավոր հատակագծի պահանջներով ՝ Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է

1. Արարատի մարզի Մրգավան համայնքի վարչական սահմաններում գտնվող 0044-0028կադաստրային ծածկագրին հարակից 200.9քմ հողամասը և հողամասում առկա 78.45քմ շինությունը որևէ անձի չի պատկանում և գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում չի կատարվել: Ելնելով քարտեզագրման սխալն ուղղելու անհրաժեշտությունից, հողամասի և հողամասում առկա շինության նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը և այն ընդգրկել համայնքի հիմնական միջոցների ցանկում:

2. Հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագծի պահանջները, հողամասի և հողամասում առկա շինության գործառնական նշանակությունը փոխել և դասել բնակավայրերի հասարակական նշանակության հողամասերի գործառնական նշանակության՝ համաձայն համայնքի գլխավոր հատակագծի:

2. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ

4. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

5. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

7. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 32-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է

1. Մրգավան համայնքի 2016 թվականի վարչական բյուջեի եկամտային մասում պակասեցնել աղբահանության վճարը 200,0/երկու հարյուր հազար/ դրամի չափով, իսկ ծախսային մասում այդ նույն գումարը պակասեցնել աղբահանություն և սանիտրական մաքրում/05.01.01.51/ ծրագրի 4213/կոմունալ ծառայություններ/ հոդվածից:

2. Մրգավան համայնքի վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել տեղական տուրքերի պլանը ժամը 24:00-ից հետո աշխատող զվարճանքի օբյեկտների համար 50,0/հիսուն հազար/ դրամի չափով:Ծախսային մասում այդ գումարը հատկացնել վարչական բյուջեի պահուստային ֆոնդ /11.01.02.51/ ծրագրի 4891/պահուստային միջոցներ/ հոդվածին:

2. Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում/06.04.01.52/ ծրագրի 4212/էներգետիկ ծառայություններ/ հոդվածից

2.1 Սոցիալապես անապահով անձանց աջակցություն/10.07.01.54/ ծրագրի 4729/այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին հատկացնել 200,0 /երկու հարյուր հազար/ դրամ:

2.2 Մշակութային միջոցառումների իրականացում/08.02.04.51/ ծրագրի 4269/նոր տարվա նվերներ/ հոդվածին հատկացնել 164,0 /մեկ հարյուր վաթսունչորս հազար/ դրամ:

2.3 Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և տեղեկատվության տրամադրում/01.06.01.60/ ծրագրի 4241/մասնագիտական ծառայություններ/ հոդվածին հատկացնել 40,0/քառասուն հազար/ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ

3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ

4. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ

6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

7. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 33-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով՝ Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև՝ մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7.500 դրամ:

բ) Սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ

բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25.000դրամ

գ. 1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35.000դրամ

դ. 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50.000դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝1500դրամ

4) 20քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝2500դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝1500 դրամ:

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<1>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝2500դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000դրամ,

բ.26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500դրամ,

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000դրամ,

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500դրամ,

ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000դրամ,

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝6000դրամ>>.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ 3000դրամ,

բ.26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500դրամ,

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000դրամ,

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500դրամ,

ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000դրամ,

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական ծինությունների ներսում վաճառքի կազմակերպմն դեպքում՝ 6000դրամ.

5.Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350դրամ՝ 1քմ համար.

2) հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000դրամ:

3) խանութներում, կրպակներում <<հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում >> տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30.000դրամ

4)համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքն ընացիկ տարվա համար սահմանվում է 50000դրամ

5) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000դրամ

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7.000դրամ

գ.51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000դրամ,

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000դրամ

ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000դրամ,

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000դրամ,

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000դրամ,

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3.000դրամ,

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000դրամ,

ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000դրամ,

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12.000դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝25.000դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝500.000դրամ

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝250.000դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝100.000դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քմ-ի տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500դրամ:

2) Թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.500դրամ:

3) Այլ արտաքին գովազդի համար՝ 1.000դրամ:

4) սոցիալական գովազդի համար՝0դրամ:

5) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1քմ-ի դիմաց սահմանվում է տեղական տուրք տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝250դրամ:

6) Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քմ-ի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝100դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500դրամ:

9.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50.000դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ՝ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5.000դրամ:

11. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 250.000դրամ:

12.Սույն որոշման 1-ին,2-րդ և 3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0.5 գործակցով:

Տեղական վճարներ

1. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

2.համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ 10.000դրամ:

3. ՏԻՄ կողմից աղբահանություն իրականացնելու համար նախատեսվում է տեղական վճար՝ յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 100դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 34-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, <<ՄՐԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջներով՝ Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Մրգավան համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, <<Մրգավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ աշխատակիցների հետևյալ թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

1. Համայնքի ղեկավար՝ 265.334/երկու հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր երեսունչորս/ դրամ

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ

2. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ 1 - 119.027/մեկ հարյուր տասնինը հազար քսանյոթ/ դրամ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/՝ 1 - 146.054/մեկ հարյուր քառասունվեց հազար հիսունչորս/ դրամ

4. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/՝ 1-

127.652/մեկ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր հիսուներկու/ դրամ

5. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2/՝ 1- 127.652/մեկ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր հիսուներկու/ դրամ

6. Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/՝ 1 - 126.203/մեկ հարյուր քսանվեց հազար երկու հարյուր երեք/ դրամ

7. Համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/՝ 1 - 77,904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

8. Հարկահավաք՝ 1 - 127.652/մեկ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր հիսուներկու/ դրամ

9.Գանձապահ՝1-119.027/մեկ հարյուր տասնինը հազար քսանյոթ/ դրամ

10. Գրադարանավար՝ 1 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

11. Գործավար՝ 1-72.751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/դրամ

ՏԵԽՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

12. Պահակ՝ 1 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

13. Վարորդ՝ 1 - 79.366 /յոթանասունինը հազար երեք հարյուր վաթսունվեց/ դրամ

14. Հավաքարար՝ 1 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

<<ՄՐԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Մանկապարտեզի տնօրեն՝ 120.000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ

2. Հաշվապահ՝ 0,5 - 72.751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

3. Դաստիարակ՝ 0,625 - 77,904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

4. Դաստիարակ՝ 0,625 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

5. Դաստիարակ՝ 0,625 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

6. Դաստիարակ՝ 0,625 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

7. Երաժշտության դաստիարակ, պարուսույց՝1 - 72.751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

8. Դաստիարակի օգնական՝ 1 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

9. Դաստիարակի օգնական՝ 1 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

10. Բուժքույր՝ 0,5 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

11.Տնտեսվար՝0.5 -72.751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

12. Խոհարար՝ 1 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

13. Հավաքարար՝ 1 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

14. Պահակ՝ 1 - 72.751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
7. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ